

«ՄԱՅՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐՈՒՄ

Ազգակցական հարաբերություններ արտահայտող իմաստային-թեմատիկ խումբը լեզվի այն գործուն հատվածն է, որը հազարամյակների ընթացքում ոչ թե կորցրել է իր կենսունակությունը, այլ, ընդհակառակը, համալրվել ու հարստացել է ուրիշ լեզուների բառապաշարի շնորհիվ: Այս առումով հատկապես բարբառային նյութը մեզ է հրամցնում այնպիսի բառածներ, որոնք հին գրական հայերենում չեն վկայվել, այնինչ հայ բարբառներում անադարտորեն պահպանել են հնդեվրոպական արմատական ձևերը:

Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտում հայերենի բարբառագիտական ատլաս կազմելու նպատակով հավաքված շուրջ 500 խոսվածքային միավորների նյութերը մեզ հնարավորություն են ընձեռել կատարելու ազգակցական հարաբերություններ արտահայտող իմաստային-թեմատիկ խմբի քննությունը:

Այս խումբը կազմող բառերի շարքում առանցքային տեղ են գրավում *հայր* և *մայր* բառանվանումները: «Հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրի» հ.159 կետով ներկայացված է *մայր* հասկացությունը:

Բուն արյունակցական-ազգակցական տերմինների մեջ *մայր* հասկացության բառանվանումները բավականաչափ բարդ ու խայտաբղետ պատկեր են ներկայացնում: Բացի հնդեվրոպական արմատներից, հայերենի բարբառներում հանդիպում են բառեր, որոնք փոխառված են հարևան ժողովուրդների լեզուներից (հունարեն, ասորերեն, պարսկերեն, վրացերեն, թուրքերեն, քրդերեն և այլն): Որոշ բառերի ստուգաբանությունն առ այսօր չի մեկնված:

Մայր հասկացությունը հայերենի բարբառներում արտահայտվում է բազմաթիվ բառանվանումներով, որոնք, ըստ ծագումնաբանության, կարե-

լի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Բուն հնդեվրոպական արմատներ, որոնք պահպանված են հայերենի գրավոր հուշարձաններում.

2. Հնդեվրոպական արմատներ, որոնք չեն ավանդված հին գրական հայերենում.

3. Հնավանդ արմատներից իմաստային տեղաշարժերով առաջացած բառանվանումներ.

4. Փոխառյալ բառեր.

5. Չստուգաբանված բառածևեր:

1. Բուն հնդեվրոպական արմատներ

Հայերենի գրավոր հուշարձաններում պահպանված և առ այսօր գործածվող բուն հնդեվրոպական արմատը *մայր*-ն է: Այն բնիկ հայկական բառ է, որ ծագում է հնիս. *mate'r* ձևից: Այս բառարմատը գործածական է նաև հնդեվրոպական քույր լեզուներում (օրինակ՝ ռուսերեն *мать*, անգլերեն *mother*, գերմաներեն *mutter* և այլն):

Հնչյունական մակարդակում *մայր* բառանվանումը հայերենի բարբառներում դիստորվում է *մէր* (կոչական ձևերը՝ մէրա՛, մէրօ), *մար*, *մար*, *մայ*, *մըր* տարբերակներով:

Իսկ բառակազմական մակարդակում առկա է *-իկ* ածանցով բառածևը՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներով (մէրիգ, մարիկ, մարի, մայրիգ և այլն): Խոսքի շղթայում բառը հիմնականում կոչական գործառնություն ունի:

Մար հնչյունափոխված տարբերակը՝ *աբա* հնչյունափոխությամբ, *մայր-մար*, հանդիպում է հայերենի և՛ արևմտյան, և՛ արևելյան խմբակցության բարբառներում: Այս բառածևը առավելապես տարածված է արևմտյան խմբակցության Անտիոքի (Քեսաբ, Բեյլան), Կիլիկիայի (Մարաշ, Հաջըն), Փոքր Ասիայի (Կարին, Սեբաստիա, Խարբերդ-Երզնկա, Արաբկիր, Եղեսիա, Համշեն, Ակն), Պոլսի (Օրդու, Տրապիզոն) բարբառների խոսվածքներում:

Իսկ արևելյան խմբակցության բարբառներում *մար* հնչյունական տարբերակը՝ իբրև մեկուսացած հատկանիշ, գործառնում է Ղարաբաղ-Շամախի միջբարբառախմբում (Գորիս, Հաղորութ, Ղարադաղ):

Մայր բառի *Մար* (ա-ի դիմաց առաջնալեզվային ա-ով) տարբերակը առկա է Համշենի, Տրապիզոնի, Օրդուի, Բեյլանի, Մալաթիայի, Արաբկիրի բարբառներում։ Ձեյթունում, Հաջընում փաստված է *մայ* հնչյունական տարբերակը այդ բարբառին հատուկ թշինչունափոխությամբ։

Աբէ հնչյունափոխությամբ *մայրամեր* հնչյունական տարբերակը գործածական է հայերենի և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներում։ Այն հանդիպում է արևմտյան խմբակցության հարավկենտրոնական բարբառախմբի Մուշի, Սասունի, Ալաշկերտի, Վանի, Ղիադինի բարբառներում, Փոքր Ասիայի բարբառախմբի Կարիի բարբառում։ արևելյան խմբակցության Արարատյան (Աշտարակ, Երևան, Աստապատ, Էջմիածին, Ջուղա, Բայազետ), Խոյ-Մարաղայի բարբառախմբերի բարբառներում։

Արեր հնչյունական տարբերակն է գործառու Ղարաբաղ-Շամախի միջբարբառախմբի որոշ խոսվածքներում (Խանլար ք., Ղարաբաղ-Կոճողուտ, Հարությունագոմեր, Գորիս, Թալիշ)։

Մայր հասկացությունը *միր* բառածևով է առկա Սասունի Սեմալ գյուղում։

2. Հնդեվրոպական արմատներ, որոնք չեն պահպանվել հին գրական հայերենում։

Հայերենի մի շարք բարբառներում մայր հասկացությանը համապատասխանում է *մամ* բառածևը։

Ըստ Հր. Աճառյանի՝ *մամ* բառանվանումը փոխառված է հունարեն *μαμη* «մեծ մայր, մամ» բառից։ Գիտնականը բառը համեմատում է լատիներեն *mamma*, իռլանդերեն *mam*, ռուսերեն *мама*, լեհերեն *mama*, ֆրանսերեն *maman*, «մայրիկ» բառերի հետ՝ բոլորն էլ համարելով *մայր* բառից կազմված փաղաքշականի ձևեր, որոնց միավանկերն էլ կան, ինչպես սանս. *ma*։ Աճառյանի կարծիքով՝ հայերենում ևս *մամ*-ը կարող էր *մայր* բառից կազմված փաղաքշականի մի ձև լինել, բայց ««մայր» բառի փաղաքշականը զուգընթաց է ընթանում *հայր* բառի փաղաքշականի հետ, որովհետև *հայր* բառից չի կարող հայերենի մեջ *պապ* ձևն առաջանալ, և պապ փոխառեալ է»¹, ուստի և եզրակացնում է, որ *մամ*-ը ևս պետք է փոխառյալ

համարել հունարենից: Անվանի գիտնականը մերժում է նաև նրա՝ պարսկերենից փոխառյալ լինելը, քանի որ այն իր նշանակությամբ չի համապատասխանում պարսկերենում արտահայտված իմաստին, իսկ հունարենը, նրա կարծիքով, համապատասխանում է և ձևով, և նշանակությամբ:

Մինչդեռ ակադ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ նշում է, որ սակավ են բարբառներում պահպանված հնդեվրոպական այն արմատական ձևերը, որոնք բացակայում են հայերենի գրավոր հուշարձաններում: Այնուամենայնիվ, դրանք կան, և իմաստային-թեմատիկ խմբերից երկրորդում՝ մարդկություն, սեռ, տարիք, ազգակցություն արտահայտող բառերի թվում գիտնականը ներառում է *ասի, դարդ, աստտա, մա, մամ, ման* բարբառային բառերը, որոնք, ըստ նրա, գերազանցապես մանկական կամ փառաքչական բնույթի են:² Այնուհետև մեկ այլ աղիթով հեղինակը գրում է. «Եթե նկատի առնենք բառի տարածվածությունը բարբառներում՝ տարբեր ձևերով և իմաստներով (*մամ, մամա, մամիկ, «տատ», մամ, «մայր», մամո, «մայրիկ»*) և, մանավանդ, մամա «ուտել» մանկական բառի գոյությունը, ապա կարելի է ավելի հավանական համարել հայ. բառերի բնիկ լինելը, թեև, իհարկե, հնարավոր է որոշ տարածքներում խառնում (կոնտամինացիա) հուն. և պոսկ. ձևերի հետ»:³ Նշված բարբառային բառերը փաստված են նաև հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) ծրագրով հավաքած նյութերում:

Մամ բառազուգաբանության տարածական ընդգրկումն այնքան էլ մեծ չէ: Այն առավելապես կղզիացած է բարբառների արևմտյան խմբակցության հարավկենտրոնական բարբառախմբի Մուշի (Ալաշկերտ, Բաղեշ, Բուլանդղ, Մուշ), է նաև *մամ* հնչյունական տարբերակը (Սասուն-Հազգո): Եզակի օրինակներ են Տալվորիկ-Մոտկանի, Բուն Սասունի և Տիգրանակերտի բարբառներում: Վկայված առկա նաև պարսկահայ տարածքում, Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբում, Տավուշում (հավանաբար Ղարաբաղից գաղթածներ), Աշտարակում (Մուղնի), Նախիջևանում:

Սա, մամա բառաձևերը մի շարք խոսվածքներում զուգահեռաբար գործառում են տվյալ բարբառներին բնորոշ այլ բառազուգաբանությունների հետ, իսկ որոշ բարբառներում դրանք ունեն միայն կոչական ձևի

կիրառություն: Չնարավոր է նաև, որ *մամա*, *մա* բառազուգաբանության հաճախակի գործածությունը ռուսերենի հետ տևական շփումների ազդեցության արդյունք լինի: Սակայն որոշ բարբառներում, որոնք չեն եղել ռուսերենի ազդեցության ոլորտում, դարձյալ գործառում է միայն *մամա* բառազուգաբանությունը: Օրինակ՝ պարսկահայ տարածքում Միանդարի Թաղիաբադ գյուղ, Փերիայի Վերին խոգյան և այլն, մայր հասկացության դիմաց գրանցված է միայն *մամա* բառածևը:

Չայերենի բարբառներում առկա հաջորդ հնդեվրոպական արմատական ձևը, որը չի ավանդված գրավոր հուշարձաններում, *նան* բառազուգաբանությունն է: Ո՛չ ՆՅԲ-ում, ո՛չ էլ Չր. Աճառյանի Արմատական բառարանում այս բառի ստուգաբանությունը չի տրված, սակայն Գ. Զահուկյանը այն համարել է հնդեվրոպական արմատ:

Ինչպես հայտնի է, հայկական դիցաբանության մեջ *Նանե*-ն Արամազդի երկրորդ դուստրն է, Անահիտի եւ Միհրի քույրը: Նա համարվել է իմաստության, ողջախոհության աստվածուհին, մայրության և տան, օջախի պահապանը:⁴ Մինչ այսօր էլ շատ բարբառներում *նանե* բառը պահպանել է այս իմաստը: Օրինակ՝ Արարատ գյուղի խոսվածքում «Նանե-նան է խօսում ես», այսինքն՝ մեծ-մեծ: Կամ «Մէր տան նանէն է», այսինքն՝ մեծը, օջախի պահապանը:

Որոշ բարբառներում *մայր* հասկացության դիմաց *նան* (նանե) բառազուգաբանության առկայությունը ամենայն հավանականությամբ առնչվում է *Նանե* աստվածուհու անվան հետ: Ողջախոհության, իմաստության, մայրության և տան օջախի պահապանի խորհրդանիշը կարող էր *մայր*-ը լինել: Եվ ինչպես արդեն նշել ենք, Գ. Զահուկյանը բարբառային հնաբանությունների շարքում ընդգրկել է նաև *նան* բառածևը: Գիտնականը *նան*, *նանի*, *նանե*, *նանա* բառերի համար հնարավոր է համարում նաև իրանական ծագում (հմտ. պոսկ. *na-na*-մայր), եթե չենթադրենք բնիկ և իրանական փոխառյալ ձևերի խառնուրդ (բաղարկություն):⁵

Չայերենի բարբառներում այն փաստված է մի քանի հնչյունական տարբերակներով.

1. *ճան* – Զարգազի շրջ. Գուլիզարդ գ., Չարմահալի շրջ. Աղբուլաղ, Սինազան գյուղեր:

2. *ճանե* - հարավկենտրոնական բարբառախմբի մի շարք բարբառներում (Մուշ, Սասուն, Ալաշկերտ), որտեղ զուգահեռաբար է գործածվում այլ զուգաբանությունների հետ (աղե, մեր):

3. *ճանի* հնչյունական տարբերակը գործառույթ է Լոռիում (Հաղպատ, Կոթի, Թեղուտ, Շոճկան, Շամուտ և այլն), Գորիսում, ինչպես նաև Պարսկահայքում (Վերին Բուրվարի շրջ. գ. Խորզենդ):

ճանա (ճանա) հնչյունական տարբերակն է առկա բարբառների արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի բարբառում, Արարատյան բարբառախմբի Ջուղայի բարբառում: Հայտնի է, որ 1828 թ.-ին խոյեցիների մի ստվար զանգված վերաբնակեցվել է Արարատյան դաշտում (Էջմիածին, Արտաշատ, Աշտարակ),

4. Սյունիքում, Վայոց ձորում (Գորիս, Միսիան, Եղեգնաձոր) և Նախիջևանում: Հետևաբար այդ բնակավայրերից գրանցված խոսվածքներում ևս *մայր* հասկացության դիմաց փաստված է *ճանա* (ճանա) բառազուգաբանությունը:

Պաղո բառածը ևս Գ. Ջահուկյանը համարում է բարբառային հնաբանություն՝ այն բխեցնելով հնդեվրոպական **dhe-dh(e)* (հմտ. չվեյց. *daddi*-«հայրիկ») արմատից:⁶ Մեծանուն լեզվաբանը նշում է հայերենի համար այս բառի միայն *հայր* և *քույր* իմաստները: Սակայն հայերենի բարբառներում *ղաղո*-ն փաստված է նաև *մայր* իմաստով:

Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ հնդեվրոպական *dhe, dhe-dh(e)* արմատի համար տալիս է հետևյալ բացատրությունը. «Մանկական բառ՝ ընտանիքի ավագ անդամներից նշանակելու համար»:⁷

Հայ բարբառների ընծեռած նյութի հիման վրա կատարելով *հայր* և *մայր* բառերի համեմատական քննությունը հայերենի բարբառներում եկել ենք այն եզրակացության, որ *ղաղո* բառի իմաստային դաշտում տեղաշարժեր են կատարվել. անցում *հայր*-ից *մայր* իմաստին կամ *մայր*-ից *քույր* իմաստին և կամ հակառակը: Նույնիսկ դժվար է ասել, թե *ղաղո* բառի

սկզբնական իմաստը որն է եղել: Թուրք-ռուսերեն բառարանում *դուդու* զլխաբառի դիմաց տրված է հետևյալ բացատրությունը. «*дуда, дудак, пожелая армяника*»:⁸ Այսինքն՝ հայերը թուրքերենից այս բառը փոխառել էին կարող. թուրքերն իրենք են հավանաբար հայերից վերցրել *դադա* բառը, որով միայն տարեց հայուհուն են դիմել:

Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերում բառը փաստված է *դուդու*, *տուդու*, *դադէ*, *տադէ*, *դադէ* հնչյունական տարբերակներով: Այս բառագուգաբանությունը առկա է արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Ակն (*տուդու*), Նիկոմեդիայի Ասլանբեկ գ. (*դուդու*), հարավկենտրոնական բարբառախմբի Մուշ, Տավլոդրիկ-Մոտկան, Սասուն (*դադէ*), ինչպես նաև Վանի (*դադէ*) բարբառներում:

Հայերենի բարբառներում *մայր* հասկացությունը դրսևորվում է նաև *ապա* բառաձևով:

Ինչպես հայտնի է, նշված բառաձևը (*ապա*, *ապի*, *ափու* և այլն) *հայր* հասկացության բառագուգաբանություն է համարվում: Ըստ Հր. Աճառյանի՝ *պա*-ն առաջացել է *եղբայր* բառից (*ախպար>ախպր>ապր> ապէ> ապի> ապա* և այլն):⁹ Նույն կարծիքին է նաև Հ. Ասմանգուլյանը:¹⁰ Սակայն Գ. Ջահուկյանը *ապա*-ն համարում է բարբառային մանկական-փաղաքշական բնույթի հնդեվրոպական հնաբանություն: Այն մանկական թոթովանքի բառ է եղել հնդեվրոպական ընդհանրության ժամանակ, ու այստեղ ևս կարելի է ենթադրել իմաստային տեղաշարժ, որի հետևանքով էլ հավանաբար առաջացել է *ապա* բառի *մայր* իմաստը: Սակայն բառի *մայր* իմաստը փաստված է մեզ հայտնի բառարաններից ոչ մեկում:

Բարբառագիտական ատլասի համար հավաքված նյութերում այն *մայր* իմաստով գրանցված է Փոքր Ասիայի բարբառախմբի Կարինի բարբառի (Ախալքալաքի Բեժանո, Կարծախ, Վաչիան գյուղեր), Կարսի (Նախիջևան, Փալդրվան գյուղեր) խոսվածքներում և Սեբաստիայի բարբառի (Թոնուսի գավառի Դենդիլ գ.), Կանգալի Մանջալիկ գյուղում:

Բառը փաստված է *աբա*, *աբէ*, *աբա* հնչյունական տարբերակներով: Պարզվում է, որ այս բառը հայերենի որոշ բարբառներում (օր․ Կարինի

բարբառի Շիրականութ, Մեծ Մանթաշ գյուղերի խոսվածքներում (Բասենից գաղթածներ)) նշանակում է հորեղբոր կին, նաև մեծ կանանց դիմելու հարգական ձև է:

Մայր հասկացության դիմաց հայերենի բարբառներում գործառույթ բառանվանումների շարքում առանձնանում է նաև *աղէ* բառածը: Այս բառի շուրջ հայ լեզվաբանության մեջ տարբեր կարծիքներ գոյություն ունեն: Գ. Ասմանգուլյանն իր աշխատության մեջ այն համարում է քրդական փոխառություն. *ade (ate) attā* «*хүрәк-de- «mama»*»:¹¹

Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ գրում է. «Գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները երկու տիպի են.

1. Արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնաշերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին:

2. Կան զգալի թվով բնածայն և մանկական բառեր, որոնք հնչյունապես շեղվում են հայերենի բուն օրինաչափություններից»:¹²

Այս վերջին շարքում Գ. Ջահուկյանը ընդգրկում է նաև *աղէ* բառածը՝ *աղո, աղէ, ատտա* հնչյունական տարբերակներով:

Հայերենի բարբառներում առավելապես գործածական է *աղէ* հնչյունական տարբերակը: Թերևս, իրոք, քրդերենի ազդեցությունն այստեղ ևս առկա է, որովհետև *աղէ* բառածը հատկապես այն տարածքների բարբառներում է գործածական, որտեղ հայերն ապրել են քրդերի հարևանությամբ, սակայն չմոռանանք և այն համագամանքը, որ քրդերենը ևս հնդեվրոպական լեզվաընտանիքին է պատկանում: Այս բառը բնորոշ է հարավկենտրոնական բարբառախմբի Մուշի (Ալաշկերտ, Մամազկերտ, Խնուս, Բուլանդ), Վանի միջբարբառախմբի Դիաղինի բարբառներին: Սասունի մի խոսվածքում (Հազգո) գրանցված է *աղա* հնչյունական տարբերակը, իսկ Վանի գավառի Արճեշի Բոլորմակ գյուղում նաև՝ *աղո* հնչյունական տարբերակը: *Աղէ*-ն մասնակիորեն գործառույթ է նաև արևելյան տարածքի խոսվածքներում (օր.՝ Սուրմալու):

3. Իմաստային փոխանցումով առաջացած բառածներ

Ինչպես հայտնի է, լեզվում հաճախ տեղի է ունենում բառերի իմաստային տեղաշարժ: Այսպես, հայերենի բարբառներում *մայր* հասկացության դիմաց վկայված է *հարս* բառազուգաբանությունը, որը, անշուշտ, իմաստային փոխանցումով նոր կիրառություն ստացած բառած է: Ընտանիքի ավագ անդամներին ընդօրինակելով նաև երեխաներն են իրենց մայրերին *հարս* անվանել: Հայերենի բարբառներում այն առկա է *հարսա*, *հարսի*, *հարս* տարբերակներով: *Հարսի*, *հարս* բառածը փաստված է պարսկահայ տարածքում (Փերիա, Քյարվանդի շրջան), *հարսա* կոչական ձևը գործառվել է Մալաթիայում:

Հայերենի բարբառներում *մայր* հասկացության բառազուգաբանություն է դիտվել նաև *ազի* բառածը: Այն հավանաբար իգական սեռը մատնանշող *աղջիկ* ընդհանրական բառանվանման մասնավորումն է՝ *մայր* իմաստով: *Աճի* բառածը մանկական խոսքում առաջացել է *աղջի՛ք* կոչական ձևից (աղջիկ>աղջի>աճի):

Հայերենի մի շարք բարբառներում *մայր* հասկացության բառային համապատասխանություն է համարվել *ազի* բառազուգաբանությունը: Հ. Ասմանգուլյանը զբաղվել է այս բառի հանգամանալից քննությամբ և եկել է այն եզրակացության, որ Ղարաբաղի բարբառում առկա *հասի* բառածը (Ղարաբաղի բարբառում *հորաքույր* է նշանակում) հնդեվրոպական արմատական ձև է, որն արտացոլված չէ հայերենի գրավոր հուշարձաններում: Ըստ Ասմանգուլյանի՝ *hasi*-ն ուրիշ ազգակցական տերմինների նման պետք է կազմված լինի *has+!*: *has* ձևության մեջ նա տեսնում է հնդեվրոպական արմատներից մեկը, որ նշանակում է «ծնել»: Տվյալ տերմինը առկա է խեթական *has(s)-ծնել*, որից խեթերենն ունի մի շարք ազգակցական տերմիններ-*hassa-pno*, *ponnolihh*, *hass-pno* և *ðno*, *hassant-hարազատ որդի*:¹³ Գիտնականը եզրակացնում է, որ այս արմատի սկզբնական նշանակությունը թերևս կարելի է վերականգնել իրև *ծնող*, *մայր*: Եվ հենց այս իմաստով էլ հայերենի որոշ բարբառներում առկա է *աջի* բառածը, որը, սակայն, Ասմանգուլյանը չի նշել՝ ձեռքի տակ համապատասխան նյութեր չունենալու պատճառով: Իսկ *ազի* բառի՝ Ղարաբաղում առկա *հորաքույր* նշանակությունը, կարծում ենք, իմաստային տեղաշարժի

արդյունք է եղել: Որոշ խոսվածքներում առկա է *ազի* բառի ևս մի իմաստային տեղաշարժ՝ *հորեղորո կին* (Եղեգնածոր, Նախիջևան):

Մեր կարծիքով՝ Հ. Ասմանգուլյանը ճիշտ եզրահանգման է գալիս՝ *ազի* բառածևը համարելով արխախի ազգակցական տերմին, որը չի արտացոլվել հին հայերեն գրական լեզվում, սակայն ավանդված է հայերենի բարբառներում նախ՝ *մայր* իմաստով, ապա արդեն բառիմաստի տեղաշարժով առաջացած *հորաքույր* (Ղարաբաղ), *հորեղորո կին* (Եղեգնածոր) իմաստներով:

Այս եմ ապացուցում հայերենի բարբառներից հավաքված նյութերը, որոնցում *մայր* իմաստով բառածևը առկա է *ազի*, *հազի*, *ազի*, *ազա* հնչյունական տարբերակներով:

Է. Աղայանը ևս «Արդի հայերենի բացատրական բառարանում» *հասի* գլխաբառում հղում է անում *ազի* բառածևին, որն էլ բացատրում է *մայր* իմաստով:¹⁴

Մայր հասկացության դիմաց *ազի* բառածևը ընդգրկում է բարբառների արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի, Արարատյան (Նախիջևանի Ազնաբերդ գյուղ), Ջուղայի (որտեղ փաստված է նաև *հազի* հնչյունային տարբերակը), Ղարաբաղ-Շամախիի, Ազուխ-Սեդրիի (Կարճևան՝ *հազի*) բարբառներում: Իսկ Ցղնայում՝ *օյզի*՝ տվյալ բարբառին բնորոշ *աօ* հնչյունափոխությամբ, Տանակերտում վկայված է *օզի* հնչյունական տարբերակը:

Մայր հասկացության դիմաց Ղարաբաղի բարբառի մի քանի խոսվածքներում (Գորիսի Խոտ, Շինուհայր գյուղեր) առկա է նաև *զիզա*, *զիզի* բառազուգաբանությունը, որը, կարծում ենք, *ազի* բառածևի՝ բառասկզբում *զ*-ի հավելմամբ առաջացած հնչյունական տարբերակ է՝ *ազի>զիզի>զիզա*:

Հայերենի բարբառներում *մայր* հասկացության բառազուգաբանություններ են դիտվել նաև *անա* և *ավա* բառածևերը: Ըստ ՆՀԲ-ի՝ *անա* (հան) բառածևը թուրքական փոխառություն է:¹⁵ Սակայն Հր. Աճառյանը փաստում է, որ հին հայերենն ունի հնդեվրոպական ժազմամբ *հան* և *հաւ* բառարմատները, որոնցից *հան*-ը (հոր կամ մոր մայր իմաստով) առաջացած է համարում հնդեվրոպական *an* նախածևից՝ հայերենի մեջ *հ*-ի

հավելմամբ:¹⁶ Գ. Ջահուկյանը ևս *հան(ի)-ն* «տատ» իմաստով, համարում է հնդեվրոպական արմատ:¹⁷ Կարծում ենք, որ մանկական լեզվի բնածայնական բառը *հանի-ն*, բառիմաստային անցում է կատարել *տատ* նշանակությունից *մայր* իմաստին: Եվ ենթադրում ենք, որ հայերենի բարբառներում առկա *անա* բառածևը սերում է հնդեվրոպական *an* արմատից, այսինքն թուրքական փոխառություն է:

3. Ասմանգուլյանի կարծիքով ևս հին հայերենում առկա *հաւ (պապ)* և *հան (տատ)* հնդեվրոպական ժազման տերմինները դուրս են մղվել գրական լեզվից, բայց պահպանվել են բարբառներում:¹⁸

Անա բառազուգաբանությունը հայերենի բարբառներում փաստված է *աննա, անէ՛* (կոչ.), *անա* հնչյունական տարբերակներով (Յր. Աճառյանը փաստում է նաև *խանիկ* բառածևը Ջուղայում «մեծ մայր» իմաստով):

Անա բառածևը ներառում է բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի (Բեյլան), Կիլիկիայի (Սարաշ, Ձեթուն), Փոքր Ասիայի (Արաբկիր, Եդեսիա, Կարին-Բասեն) բարբառախմբերի խոսվածքները: *Անա* բառածևը զրանցված է նաև Նախիջևանում (Ազնաբերդ, Նորս), Կոզովիտ գավառում (Արծափ), հարավկենտրոնական բարբառախմբից՝ Ալաշկերտի Կազի գյուղում:

Բալուի Նաջարան գյուղում *մայր* հասկացության բառային դրսևորում է դիտվել *ավա* բառածևը: Այն վկայված է Ատ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» և ՀՀ ԳԱ Յր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի կողմից կազմված «Հայոց լեզվի բարբառային բառարանում»:¹⁹

4. Ասմանգուլյանը այն դասում է չստուգաբանված բառերի շարքում:

Հին հայերենում առկա *հաւ* բառը («պապ, հոր հայր» նշանակությամբ) Յր. Աճառյանը ևս համարում է բնիկ հայկական բառ՝ առաջացած *avus* նախածևից: Ցեղակիցներն է համարում լատիներեն *avus* «մեծ հայր, պապ, նախնիք», *avis* «մեծ մայր, նան, տատիկ», զոթերեն *avo* «մեծ մայր» և այլն:²⁰ Եթե ընդունենք Յր. Աճառյանի այն ենթադրությունը, որ *հաւ* բառի մեջ *հ-ն* հավելված է, ապա չի բացառվի նաև բարբառային *ավա* բառի առնչությունը *հաւ* արմատի հետ: Քանի որ ցեղակից լեզուներում բառածևն

ունի մաս *մեծ մայր, նախնիք* նշանակությունները, այս պարագայում հնարավոր ենք համարում հնդեվրոպական նախածնի *ծնող, սկզբնավորող* իմաստից *մայր* իմաստի մասնավորումը, որն էլ առկա է հայերենի բարբառներում:

4. Փոխառյալ բառեր

Հայերենում *մայր* հասկացության դիմաց գործառուղ բառազուգաբանությունների շարքում առկա են մաս փոխառյալ բառեր:

Ինչպես արդեն նշել ենք, ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանվանումները բավականաչափ անաղարտորեն պահպանել են հնդեվրոպական բառաշերտերը: Իսկ եթե կան մաս փոխառյալ բառեր, ապա դրանք հիմնականում զուգահեռաբար են գործածվում բնիկ հայերեն բառերի հետ:

Հայերենի բարբառներում *մայր* հասկացության դիմաց առկա է *այա* բառածևը, որն ամենայն հավանականությամբ թուրքական փոխառություն է: Շատ սահմանափակ վայրերում է, որ *այա*-ն ունի բացարձակ գործածություն: Հնչյունական մակարդակում դրսևորում է *այա, այի, այան* (Այանը քեզ մատաղ), *յայա* (յ հավելական հնչյունով՝ Վարդաշենի Յաղափլու գլուղում) տարբերակները:

Այա բառածևը գործառում է Ղարաբաղ-Շամախի միջբարբառախմբի խոսվածքներում: Եզակի մոուներ են գրանցված մաս Խարբերդի, Արծափի խոսվածքներում:

Մայր հասկացության դիմաց իբրև փոխառություն դիտվող հաջորդ բառածևը *դէյա*-ն է (*դայո, դայէ, դայա*, հնչյունական տարբերակներով):

Դայա գլխաբառի համար ռուս-թուրքերեն բառարանում նշված է *կերակրող* իմաստը, իսկ ստուգաբանորեն այն կապվել է *դայակ* բառի հետ: Հր. Աճառյանի Արմատական բառարանում *դայակ* ստնտու, ծծմայր իմաստով, բառը համարվում է պահլավական՝ *dayak* «ստնտու, դայեակ», պարսկական *daya* կամ *dayi* ձևից առաջացած:²¹ Ըստ Հր. Աճառյանի՝ բառը հայերենում համարվում է իրանյան փոխառություն, քանի որ ձևավորված է իրանական *եակ* մասնիկով: Գիտնականը այստեղ հղում է անում *դիել* արմատին, որ նշանակում է *ծիծ ուտել, մոր կաթը ծծել*: Այն բնիկ հայկական

բառ է համարում՝ առաջացած *dhei, dhe, dhi* արմատներից, որոնցից էլ, ըստ Չր. Աճառյանի, կարող էր ածանցվել բառի հայերեն համարժեքը:²²

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ բարբառային *դէյա, դայէ, դայօ, դայա* տարբերակներում թերևս առկա է հնդեվրոպական *դի* արմատը՝ պարզապես կոչականի գործառնությամբ:

Ղէյա բառագուգաբանությունը գործածական է Խոյ-Մարաղայի բարբառախմբի խոսվածքներում, ինչպես նաև Սասունի (Ռաբաթ, Իշխանաձոր) բարբառում:

Մայր բառի դրսևորումներն իբրև կոչական

Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանվանումները հայերենի բարբառներում ունեն կոչականի բազմաբնույթ ձևեր: Հոդվածի վերջում բերված աղյուսակում ամփոփված են *մայր* հասկացության՝ բարբառներում առկա նաև կոչական ձևերը:

Հայերենի բարբառներում *մայր* հասկացության դիմաց առկա կոչական ձևերից ուշագրավ են հատկապես *յէմօու*, *մումէի (էյ)* (թույլ յ), *ամայ*, *ամայ, մամայ* ձևերը:

Յէմօու՝ կոչական ձևում, կարծում ենք, *յէ*-ն (*յա>յէ*) ծայնարկության ցուցիչ է՝ արաբերենից փոխառված, որ համապատասխանում է հայերենի *այ* ծայնարկությանը (*յա՝ մամա >յէմօու*):

Կոչականի այս ձևը փաստված է Քեսաբի բարբառում:

Հայերենի բարբառներում *մայր* հասկացության դիմաց *մումէի (էյ)*, *ամայ* բառաձևերում *յ*-ի առկայությունը խորհելու տեղիք է տալիս:

Հնարավոր է *այ մա, այ մամա* դարձած լինի *ամայ, մամայ*, իսկ *այ մամա>մումէի (էյ)*՝ ծայնարկություն հետադաս գործածությամբ:

Մենք առաջարկում ենք մի ուրիշ վարկած ևս. *մամայ, ամայ* բառաձևերի վերջում *յ*-ի առկայությունը գուցե ավելի հին երևույթ է, և այն ամենևին կապ չունի *այ* եղականի ցուցիչի հետ: Թերևս հին հայերենում առկա վերջնահանգ *յ*-ի արտացոլումն է (օր. տղայ, քահանայ և այլն), որ բարբառային այս բառերում քարացած պահպանվել է, մանավանդ որ *մամայ, ամայ* ձևերը մեր բարբառներում փաստված են ոչ միայն իբրև

կոչականի ձևեր (նույնը ունենք նաև *հայր* բառի դիմաց՝ *ապայ, պապայ*,
օր.՝ Ապայը ուրախ մարթ է):

Ամայ բառագուգաբանությունն առկա է Տավուշում (Նորաշեն, Չինչին),
Իջևանում (Ծաղկավան), Կրասնոսելսկի շրջանում (Օրջոնիկիձե, Վերին
ճամբարակ): *Սամայ*-ը առկա է Տավուշի Նորաշեն գյուղում, իսկ *մումի*
կոչական ձևը՝ Քեսաբում:

1. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հտ. 3, Ե., 1977, էջ 242:
2. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակա-
շրջան, Ե., 1987, էջ 275:
3. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակա-
շրջան, Ե., 1987, էջ 179:
4. Դիցաբանական բառարան, Ե., 1985, էջ 168:
5. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակա-
շրջան, Ե., 1987, էջ 182:
6. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակա-
շրջան, Ե., 1987, էջ 275:
7. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 300:
8. Турецко-русский словарь, Москва, 1977 г., стр. 249:
9. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 16:
10. Асмангулян А., Этимологический состав терминов родства
Армянского языка, Научные труды, N 3, Ереван, 1971, стр. 103, 98:
11. Асмангулян А., Этимологический состав терминов родства
Армянского языка, Научные труды, N 3, Ереван, 1971, стр. 101:
12. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ
283-300:
13. Асмангулян А., История армянских терминов родства, Ереван,
1983, стр. 42-47:
14. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 829:
15. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Ե., 1981, էջ 35:
16. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հտ. 3, Ե., 1977, էջ 33:
17. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակա-
շրջան, Ե., 1987, էջ 207:
18. Асмангулян А., Этимологический состав терминов родства
Армянского языка, Научные труды, N 3, Ереван, 1971, стр. 101:
19. Սախախանյան Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Ե., 1944, էջ
289: Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 112:
20. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 66-
67:
21. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հտ. 1, Ե., 1971, էջ 618:
22. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հտ. 1, Ե., 1971, էջ
668: